«Հայաստանի հանրային
հեռուստատեսության»
375047
ՀՀ,Երևան, Նորք
Գևորգ Հովսեփյան 26
Հեռ: +374 10 65-00-15
E-mail : karine@armtv.com , diana@armtv.com ,
alik@armtv.com, marat@armtv.com ,
satellite@armtv.com

ԲՈՂՈՔԱԳԻՐ

Մեր վրդովմունքն ու բողոքն ենք հայտնում Հայաստանի հանրային հեռուստատեսության տնօրինությանը ձեր եթերով հեռարձակված լրատվական հաղորդումների միակողմանի, գործող իշխանությունների տեսակետները արտահայտելու դեմ:
Հարկ ենք համարում հիշեցնել, որ Հ1-ը Հայաստանի Հանրապետության բաղաքացիների հարկային վճարումներով ֆինանսավորվող կառույց է և այն պետք է անաչառ, բազմակարծություն ապահովող լրատվական ծրագրեր հեռարձակի:
Մասնավորապես չենք կարող չմատնանշել նախընտրական և հետընտրական շրջանում «ՀԱՅԼՈՒՐ» լրատվականի ակնառու և ակնհայտ իշխանական հայտնի թեկնածուի գովազդող ուղղվածությունը:
Այս հաղորդման աշխատակազմը, լրագրական ոգուն մեղանչելով, բացահայտ քարոզչական թողարկումներ է արձակում: Նման աշխատանքը արտերկրում ապրող հարյուրհազարավոր հայորդիներին զարմանք, ապա զայրույթ է պատճառում: Այնինչ բազմաթիվ օտար լրատվական աղբյուրներ լուսաբանում են Հայաստանում նեկա բոլոր իրադարձությունները (FRANCE 24, EURONEWS, TF1, I-TV և վրացական մեծ ու փոքր կայաններ):
Շատ ամոթալի է, որ մեր անկախության 17–ամյակը պիտի դիմավորենք «լճացման տարիներին» բնորոշ, ինքնաքննությամբ կաշկանդված հայաստանյան լրատվական ընկերակցությամբ:

Մենք, կարծես, անցած էինք համարում այն ժամանակները, երբ իրազեկման ծարավով «Ամերիկայի ձայն» կամ «Ազատություն» էինք ոսսում:

Արդյո՞ք այն ժամանակ, երբ Արցախյան հերոսամարտի արշալույսին միլիոնավոր հայեր «ՎՐԵՄՅԱ» խորհրդային լրատվական ծրագրի հաղորդած ստերից անզոր ընդվզած, այսպիս՛ի ապագայի հեռանկերներ էինք ակնկալում 2008 թվականին, 21–րդ դարի սկզբին:

Ճշմարտության առաջ մեղանչած կլինենք, եթե չնշենք ձեր եթերում պ. Բախտամյանի սկզբնավորած պատմական հաղորդաշարի (Մեր պատմության էջեր) անգնահատելի ներդրումը հայապահպանության գործին:

Վերջացնելով մեր նամակը՝ հույս ենք հայտնում, թե մոտակայում կխախտեք իշխող քաղաքական ուժին ձեր տված հավատարմության երդումը,գիտակցելով ձեր կոչումը՝ կանցնեք 90–ական թվականների ազատական ոգուն հարազատ, արհեստավարժ աշխատանքի:

Հարգանքներով՝ մի խումբ ֆրանսաբնակ հայեր